



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԹԻԻ 71

ՊԵՏՅՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՍՏՐԱՐՓՈՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԵՍՓՈՒՄՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1370 ՍՄԻՆ

ՆԻՍ ԵՕԹԱՆԱՌՈՎԸՄԷՆՐՈՐԴ

26 ապրիլ, 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԻԻԷՆՏԻԱՆ

1871

ՔՆՊԶԱՆՍՏԻՐ ԽՊՊԱՅՈՒՄ

ԲԵՅՈՒՄ 1870 ՍՄԻՆ

ՆԻՍ ՆԱ

26 ԱՊՐԻԼ 1874

ՆԱԽԱԳԱՀ . — ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱՁԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏ . — ԱՂԱԲԷԿԵԱՆ Ս . ԷՖ . (Գ . ԱՎԵՆԱՅԵՍ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

1. Պատրիարքական ընտրութեան քուէարկութիւն :
2. Ընտրութիւն Դիւանի Ընդհանուր ժողովոյ :
3. Վաւերացում նախորդ նստերու Ասենադրութեանց :

Ժամը 7 քառորդ անցած և ժողովոյն մեծամասնութիւնը դոյացած ըլլալով, Ատեանը բացուեցաւ 'ի ներկայութեան 59 երեսօտանաց . որոց թիւը վերջապէս 70 'ի յանդեցաւ : Ատենապետ էֆ . յառաջ մատուցեց երկու հրամարագրեր, որոց մէկը Խասգիւղի թաղէն նոր ընտրուած երեսօտանաց Մկրտիչ Աղաթօն էֆ . 'ի կողմէն եկած էր, և միւսն Ասլանեան Մանուկ էֆ . 'ի կողմէն :

Յիշեալ հրամարագրերը կարդացուեցան, որոց պատճէններն ահաւաստիկ :

Ամենապատիւ Տեղապահ Սրբազան Հայր

Համբարիւ ընկալայ Ձեր Սրբազնութեան օրհնածիր նամակը որով կը բարեհաճէք յայտնել ինձ մեր երեսօտանական պաշտօնին հաստատութիւնը և միանգամայն կը հրաւիրէք զիս առաջիկայ նիստին որ տեղի պիտի ունենայ ամսոյս 27 'ին ներկայ դանուելու : Սակայն, Հայր Սրբազան, միայն կիւրակէ օրերը ազատ լինելով և այն օրին ալ Խասգիւղի թաղական

գործոց արդէն նուիրած լինելով չպիտի կարենամ ազդիւն ինձ չնորհած այն երեսօտանական փախուկ պաշտօնը ընդունելու . նա մանաւանդ որ երեսօտանական ժողովոյ նիստերը դժբաղդարար միւս ժողովոց և խորհրդոց նիստերուն նման ստէպ ստէպ տեղի ունենալու հարկ տեսնուած է : Ուստի այս մասին սրտիս ցաւը և միանգամայն այնպիսի ազգային փառաւոր պաշտօնի մը զիս արժանի դատող աղնուամիտ անձանց իմ խորին շնորհակալութիւնս հրատարակաւ յայտնելով կազաչեմ ընդունել իմ այս ակամայ հրամարականս :

25 Ապրիլ 1874 Մնամ եւայլն
Խասգիւղ Մ . ԱՂԱԹՅՆ

Ամենապատիւ Սրբազան Հայր
Նախագահ Ազգային Ընդհ . ժողովոյ

Ազգն իր ընտրութեամբը զմեզ իր ընդհանուր գործոց երեսօտանական կարգելով անանց գործադրութիւնը կ'ըստպատէ մենէ :

Յաւալի ճշմարտութիւն մըն է որ Ընդհանուր ժողովը, մանաւանդ այս վերջին ատեններս, իրեն որոշման յանձնուած Ազգային ժանր ու կարեւոր խնդիրները բարձի թողի ըրած ունայն վիճարանութիւններով ժամանակ կը վատնէ:

Ընդհանուր ժողովոյ այս ընթացքը յուսալ չը տար որ պիտի կարող ըլլայ երբէք գործել եւ հետեւաբար պատասխանատու պիտի մնայ Ազգին առջեւ:

Ես չեմ ուզեր այլ եւս մնալ այս պատասխանատուութեան տակ եւ կ'ազաւջեմ ըզ-Չեր Սրբազնութիւնը որ բարեհաճի ընդունիլ իմ հրաժարականս Ազգային Երեսօխտանութենէ եւ հազորդել զայն նաեւ Ընդհանուր ժողովոյ:

26 Ապրիլ 1874 Մնամ եւ ին. Բերայ ՄԱՆՈՒԿ ԱՍԼԱՆԵԱՆ

Սոյն հրաժարականաց վրայ ժողովին կողմէ դիտողութիւն ընող չըլլալով քուէի դրուեցան եւ ընդհանուր հաւանութեամբ ընդունուեցան:

Նոյնպէս Ատենապետ էֆ. ժողովոյն ներկայացոյց Տատեան Գարութիւն էֆ. ի նամակը, որով բանաւոր պատճառաւ այսօր բացակայ դառնելու պարտաւորած ըլլալը յայտնելէ ետեւ, Պատրիարքական ընտրութեան համար իւր քուէթուղթը զրկած էր: Ատենապետ էֆ. յաւելցուց որ սոյն քուէթուղթը չկրնար ընդունուիլ, որովհետեւ քուէ զրկելու համար ազդարարութիւն եղած չէ երեսօխտանաց եւ օրէնքն ալ չներէր որ բացակայք քուէ տան, այլ երբ առաջին անգամ քուէից բացարձակ առաւելութիւն չգոյանայ, երկու առաւելագոյն քուէ ստացողաց վրայ երկորդ քուէարկութիւն եղած ատենը միայն ներկայ չգտնուողք կարող են քուէնին նամակաւ զրկել:

ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ԸՆԹՈՒԹԵԱՆ ՔՈՒՎԵՐԿՈՒԹԻՒՆ

Ատենապետ էֆ. յիշեցուց թէ նախորդ նախ որոշման համեմատ Ընդհանուր ժողովոյ այսօրուան առաջին գործը պիտի ըլլայ Պատրիարքական ընտրութեան համար քուէարկութիւն ընել, եւ Ազգին Պատրիարքն ընտրելով ազգային գործոց բանալին անոր ձեռքը յանձնել. թէ սոյն ընտրութիւնը կատարելու համար պէտք եղած նախապատրաստութիւնը

արդէն եղած են, Եկեղեցական Համագումար ժողովոյ շինած Պատրիարքոս եպիսկոպոսոց ընդհանուր ցանկը ժողովոյ սրահին մէջ կախուած է, նոյնպէս Վարչութեան Քաղաքական ժողովոյ նոյն ցանկին մէջէն ըստ կանոնի դատած 5 ընտրելեաց ցուցակը Գիւանին գրասեղանին վրայ է. եւ որպէս զի երեսօխտանք իրենց ընելիք ընտրութեան պայմաններուն լաւ վերահասու լինին եւ գիտակցութեամբ վարուին այս կարեւոր պարագային մէջ, Սահմանադրութեան 2րդ յօդուածոյն հետեւալ պարբերութիւնն ալ կարգաց:

« Միանգամայն Եկեղեցական Համագումար ժողովոյն պատրաստած առաջին ցուցակն ալ ազգային Ընդհանուր ժողովոյն սրահին մէջ կախուած կըլլայ: Ընդհանուր ժողովն այս երկու ցուցակներէն՝ ընտրելեաց « թէ՛ կրօնական եւ թէ՛ քաղաքական որպիսութեանց վրայ երկու ձեռնհաս ժողովներուն « կարծիքն իմանալով, կընտրէ զՊատրիարք « քաղանի քուէարկութեամբ եւ բացարձակ առաւելութեամբ քուէից:

« Ընդհանուր ժողովը կրնայ Քաղաքական « ժողովոյն ներկայացուցած ցուցակէն դուրս « անձի մը վրայ ալ քուէ տալ. բայց պէտք է « որ այն անձին անունը նշանակուած ըլլայ « Եկեղեցական Համագումար ժողովոյն պատ- « րաստած ցուցակին մէջ. վասն զի այս եկե- « ղեցական ցուցակէն դուրս մնացած անձի « վրայ ընտրութիւն չկրնար ըլլալ: »

Եւ քուէարկութեան ձեռնարկելէ առաջ հրաւիրեց զերեսօխտաններն որ ներկայացուած երկու ցուցակաց վրայ թէ՛ լուսաբանուելու համար հարցում կամ դիտողութիւն մը ունին յառաջ բերեն:

ԻՓԷԿՃԵԱՆ 2. ԷՖ. — Հարկ կը համարիմ նախ բացարձակ խնդրել գիւանէն խընդրոց կարգին վրայ, վասն զի կը տեսնեմ որ փոփոխութիւն կրած է. չգիտեմ թէ ե՞րբ ժողովը հաւանութիւն տուաւ այդ փոփոխութեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախորդ նիստին որոշուած էր որ այսօր Պատրիարքական ընտրութեան քուէարկութիւնն ըլլայ. թէ որ ուրիշ ձայնակիցներ ալ կան այս որոշման դէմ խօսող, թո՛ղ խօսին, որպէս զի հասկցուի թէ գիւանը յաւալած է արդեօք:

ՔԱՆԻ ՄԸ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ. — Ո՛չ ո՛չ. դիւանը սխալմունք գործած չէ այդ մասին:

ԻՓԷԿՃԵԱՆ 2. ԷՖ. — Ես չըսի թէ առաջին խնդիրը քուէարկութիւն չէ: Խնդրոց կարգին մէջ անցեալ նիստին ինչ ինչ խնդիրներ ալ կային, որ այսօր բարձուած են, եւ հետեւապէս սպասած են Վերաբնութեան խնդիրը: Աղթամարոյ խնդիրը, Արօնական եւ Քաղաքական ժողովոց պակասած անդամոց ընտրութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ յիշած խնդիրները բարձուած չեն, արդէն շատ խնդիրներ կան. բայց այսօրուան կարգին մէջ դրուած են միայն անոնք՝ զորս կարելի է լուծել մէկ օրուան մէջ, եւ անոնց առաջինն եղած է Պատրիարքական ընտրութեան քուէարկութիւնը, որ անցեալ նիստէն որոշուած է այսօր կատարել, եւ եթէ ժամանակը ներէ գիւանի ընտրութիւնն ու նախորդ Ատենագրութեանց վաւերացումն ալ ընենք ըսուեցաւ: Չեր յարուցած խնդիրն ուրիշ բանի համար չէ կարծեմ, այլ թէ ինչո՞ւ մնացածները նշանակուած չեն. գիւանը ժամանակին ներողութեան համեմատ երեք խնդիր միայն նշանակած է:

ԱՂԱՔԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Խնդրոց կարգին կիմանալ թէ այսօր Պատրիարքի ընտրութիւն պիտի լինի. սակայն կուզեմ հասկանալ թէ հարկադրութիւն կայ մեր վրայ անպատճառ ընտրութիւնը կատարել, թէ ո՛չ իբրև խընդրոց նիւթ կրնանք դիտողութիւն ալ ընել եւ վիճարանիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անցեալ նիստին որոշմամբ վիճարանութիւնը դադրած է եւ այսօր ընտրութիւնը պիտի կատարուի. հետեւապէս ոչ հարկադրութիւն կայ եւ ոչ նոր խնդիր. այլ միմիայն անցեալ նիստին որոշումը պիտի գործադրուի:

ԱՂԱՔԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Իբրև երեսօխտան Հայոց չեմ կրնար ըմբռնել վճռական կերպով թէ ընտրութիւն պիտի լինի. ընտրութիւնը պէտք է նկատողութեան տակ դրուի. ես չեմ եկած այսօր անպատճառ քուէ տալու. քանզի դիտողութիւններ ունիմ ընտրութեան վրայ, եւ այս նպատակաւ խօսք կը խնդրեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս իւրաքանչիւր

երեսօխտան, նոյնպէս դուք ազատ էք, քուէ տալու կամ չտալու Պատրիարքի ընտրութեան համար: Բայց Գիւանը պարտ կը համարի նորէն յայտարարել թէ որոշում եղած է որ այսօր ընտրութեան քուէարկութիւնը կատարուի. իւրաքանչիւր երեսօխտանի պարտքն է մեծամասնութեան որոշումը յարգել: Սահմանադրութեան սկզբունքն է այս, որուն առջև պէտք է խոնարհիլք ամենքս: Այսու հանդերձ բանադատութիւն չկայ ոչ մէկի վրայ անպատճառ քուէ տալու. ով որ ուզէ իւր քուէն կուտայ եւ ով որ չուզէ չտար: Գիւանն արդէն յայտարարեց թէ ընտրութեան խնդրոյն վրայ վիճարանութիւնը գոցուած է անցեալ նստէն, եւ այս մասին այսօր որ եւ է մէկու մը չպիտի կրնայ խօսք տալ. միայն ընտրելեաց ցուցակներուն վրայ լոյս մը կամ տեղեկութիւն մը առնուլ ուղղները հրաւիրուած են քուէարկութեան առաջ խօսելու:

ՄԱՂԱՄԵԱՆ Յ. ԷՖ. — Քիչ մը յառաջ Ատենապետ էֆ. Սահմանադրութեան 2րդ յօդուածոյն մէկ պարբերութիւնը կարդալով յիշեցուց որ քուէարկութեան առաջ ընտրելեաց ցանկերուն վրայ թէ՛ դիտողութիւն ունեցող կայ, իրաւունք ունի յայտնել: Տարակոյսս փարատելու համար Ատենապետ էֆ. ի կարդացած նոյն յօդուածոյն պարբերութեան վրայ մէկ պարբերութիւնն ալ պիտի կարդամ, որ է այս.

« Նոյն պէս առաջ Տեղապահը Օսմանեան « հողին վրայ գտնուող բոլոր եպիսկոպոսոց « ցանկը կը շինէ, եւ իւրաքանչիւրին անուանն « առջև ըստ առաջին յօդուածոյ ընտրելու « թեան համար սահանջուած հանրամանքը « նշանակելով, Արօնական ժողովոյն կը ներ- « կայացնէ զայն: »

« Այս ժողովն ալ Եկեղեցական Համագումար ժողովը հրաւիրելով, ընտրելեաց ցուցակ մը կը պատրաստէ քաղանի քուէարկութեամբ. այսինքն իւրաքանչիւր անդամ « թղթոյ մը վրայ կը գրէ այն անուն եպիսկոպոսաց անունները՝ զորս կրօնական մասին « անընդունելի չը համարիր: Ետքը՝ քուէհաս « մարն ըլլալով, այն անունները յատուկ ցուցակի մը մէջ կ'առնուին քուէից շատու « թեան կարգաւ: Տեղապահը յիշեալ կերպիւ

զ պատրաստուած ցուցակը Քաղաքական ժողովոյն կը ներկայացնէ : Ան ալ նշանակուած անձանց ըստ քաղաքականին արժանաւորութիւնը քննելէն ետքը , ամենէն աւելի արժանաւորներէն հինգ ընտրելի կը զատէ քուէից առաւելութեամբ , և ասոնց ցուցակը Ընդհանուր ժողովոյն կը ներկայացնէ :

Ասկէ սա կը հասկնամ որ Համագումար ժողովոյ պատրաստած ընտրելեաց ցուցակէն ո՞ր եպիսկոպոսն որ դուրս մնացած է , կրօնական մասին անընդունելի է :

Արդ՝ կը տեսնեմ որ նոյն ցուցակէն բաւական թուով եպիսկոպոսունք դուրս մնացած են . հետեապէս կը խնդրեմ որ բացատրութիւն տայ Համագումար ժողովն եթէ իւր ներկայացուցիչն ունի հոս , թէ ի՞նչպէս կըմբռնէ ինք իւր ցուցակէն դուրս մնացող եպիսկոպոսաց արժանիքը , թէ միայն ԱՅ եպիսկոպոս ունինք ըստ իւր ցուցակին ընդունելի ՚ի կրօնականին , և թէ դուրս մնացածներն անընդունելի՞ են : Այս հարցմանս պատասխանին կսպասեմ , նորէն խօսք առնելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Համագումար ժողովը ներկայացնող մարմին եթէ չկայ հոս , կրօնական ժողովոյ կը մնայ պատասխանել սոյն հարցման :

ԱՂԱՔԵԿԵԱՆ Մ . ԷՖ . — Իմ հարցմանս գոհացուցիչ պատասխանը չտեսայ Գիււանէն . նորէն կը հարցնեմ , հարկադրակա՞ն է Պատրիարքի ընտրութիւնն այսօր անպատճառ կատարել , թէ ո՞չ ընտրութիւնը խնդրոյ առարկայ կրնանք ընել և վիճարանիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Գիււանին կողմէ պահ մը առաջ այդ մասին պէտք եղած պատասխանը տրուած և յայտարարուած էր Ձեզ , որ Ընդհանուր ժողովն իւր վերջին նիստին մէջ որոշած է Պատրիարքական ընտրութեան քուէարկութիւնն այսօր կատարել : Ասկէ աւելի պատասխան չունի Գիււանն ՚ի մասին Ձեր հարցման :

ԱՂԱՔԵԿԵԱՆ Մ . ԷՖ . — Այո՛ այնպէս է որոշուիլ , բայց շտապաւ եղած է և հարկադրական չէ . իրաւունք ունիմ նախ իմ նրկատողութիւններս յայտնելու և ապա ընտրութեան մասնակցելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Խնդրէն դուրս խօսելու իրաւունք չունիք . միայն ընտրելեաց ցանկերուն վրայ եթէ դիտողութիւն մը ունիք կրնաք խօսք առնուլ և խօսիլ , ինչպէս Մաղլմեան էֆ . խօսեցաւ :

ԱՂԱՔԵԿԵԱՆ Մ . ԷՖ . — Իրրև երեսփոխան Հայոց ազգին , պարտաւորութիւն ունիմ իմ դիտողութիւններս մէջ բերել և արդարութիւնը ցոյց տալ . ուստի այս պարտաւորութիւնս այսօր կատարելու առիթ դտայ և կուզեմ բացատրել թէ ևս ինքնս այսրան ժամանակէ ՚ի վեր երեսփոխան ըլլալով ՚նչպէս կը հասկնամ երեսփոխանութեան նշանակութիւնը կը հասկնամ թէ երեսփոխանութիւնն անարդութեան վիճակի մէջ ինկած է այսօր , և ապացոյց ունիմ . . .

(Բողոքոյ ձայներ Ատենաբանին դէմ)

Ատենապետ էֆ . ընդմիջելով ՚ի լուծութիւն կը հրաւիրէ Ատենաբանը և կաղդարարէ խնդրէն դուրս չխօսիլ :

Աղաքէկեան Մ . էֆ . դարձեալ կը փորձէ խօսիլ մի և նոյն նիւթին վրայ , և վերստին կարգիւրուի Գիււանին կողմէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Երեսփոխան մը իրաւունք ունի վիճարանութեան տակ ինկած խնդրոյ մը վրայ ուղածին չափ խօսելու , բայց տարբեր խնդրոյ վրայ երբէք խօսելու իրաւունք չունի . վասն զի չկրնար ըլլալ որ երեսփոխան մը իւր սրտին ուղած խնդիրն ուղած ատենն ատենաբանութեան նիւթ ընէ և օրուան կարգէն խոտորի :

ԱՂԱՔԵԿԵԱՆ Մ . ԷՖ . — Երեսփոխանութիւնն իւր նշանակութիւնը կորցրել է . (բռնակէր) թոյլ տուէք որ բացատրեմ զայս :

ՋԱՅՆԵՐ . — Երբէք կը հերքենք այդ խօսքերը :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ . ԷՖ . — Ատենապետ էֆ . անցեալ նիստին որոշման ֆորձ կարդացէք որ համողուի Ատենաբան էֆ . թէ ի՞նչ էր ժողովին որոշումը :

ԱՂԱՔԵԿԵԱՆ Մ . ԷՖ . — Դուք , Օքսէն էֆ . լաւ է որ լռէք . ձեր Օրագրին մէջ կարող էք խօսիլ որչափ և ուղէք : — Ես կը նկատեմ

որ այսօր Ընդհանուր ժողովն ուրիշ բան չընէր , բայց եթէ վեհ . կաթուղիկոսի կամքը կը կատարէ , մէկ Պատրիարք մը վար կառնէ և ուրիշ մը անոր տեղը կը դնէ . . .

Չորս կողմէն բողոքոյ ձայներ կընդմիջեն Ատենաբանը :

Ատենապետ էֆ . ՚ի կարգ կը հրաւիրէ Ատենաբանը :

ԱՂԱՔԵԿԵԱՆ Մ . ԷՖ . — Պէտք է որ վերջացնեմ խօսքս . արդարութիւնը կը պահանջէ որ անկեալ Երիմեան Սրբազանի դատաստանը տեսնուի , արդար է թէ մեզաւոր հասկցուի . անոր դատաստանը չտեսնուած կարող չենք Պատրիարք ընտրել :

Ատենաբան էֆ . կուզէ տակաւին շարունակել . սակայն Ատենապետ էֆ . կընդմիջէ և կարգիւրէ , յայտարարելով թէ խնդրէն դուրս ելլող ատենաբանին խօսքերը չեն կրնար արձանագրուիլ :

Տ . ՄԱՄՏԲԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ . — Կառաջարկեմ որ որոշուած քուէարկութիւնը կատարուի : Մաղլմեան էֆ . հարցում մը կընէ ընտրելեաց ցուցակին վրայ որ բոլորովին աւելորդ է . վասն զի վերջընթեր նիստին մէջ արդէն այդ խօսքերն եղած և պէտք եղած պատասխանները տրուած են : Ուստի այսօր նորէն կրկնելու հարկ չկայ , և պէտք է անմիջապէս Պատրիարքի ընտրութեան քուէարկութեանը ձեւնարկել :

ԿՐՃԻԿԵԱՆ Յ . ԷՖ . — Քիչ մ'առաջ գիււանին կողմէ իրաւունք տրուեցաւ մեզ ներկայացեալ ընտրելեաց ցուցակներուն վրայ դիտողութիւն ընել տարակոյսնիս փարատելու համար : Այս իրաւամբ Մաղլմեան էֆ . դիտողութիւն մը ըրաւ , որուն ևս ալ ձայնակից եմ . որովհետեւ կը տեսնեմ որ Համագումար ժողովը միայն ԱՅ եպիսկոպոս անցուցած է իւր ցուցակին մէջ , ըսել է որ դուրս մնացած եպիսկոպոսներն ըստ Սահմանադրութեան կրօնական մասին անընդունելի են . ուստի կսպասենք որ կրօնական ժողովը բացատրէ թէ Սահմանադրութեան նոյն յօդուածն ինչպէ՞ս կըմբռնէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Դարձեալ կրօնական ժողովոյ կը պատկանի պատասխանը տալ :

ՊԵԿԵԱՆ Թ . ԷՖ . — Աղաքէկեան Մարկոս էֆ . աղաա է և կրնայ թերևս իրաւունք ունեցած ըլլալ պահանջելու որ նախ Երիմեան Սրբազանի դատաստանը տեսնուի , բայց վիճարանութիւնը դադրած է ժողովոյ որոշմամբ :

Տ . ՄԱՄՏԲԷՍ ՎՐԿ . ԵՊԻՍԿՈՊՈՍ — Կրօնական ժողովը Համագումար ժողովին ներկայացուցիչը չէ որ պատասխանէ Մաղլմեան էֆ . ՚ի հարցման . ուստի իրրև երեսփոխան պիտի խօսիմ : — Ատենապետ էֆ . Սահմանադրութեան Չրդ յօդուածէն պարբերութիւն մը բերելով կարդաց և անոր ուժովը հրաւիրեց ժողովն որ ընտրելեաց ցանկերուն վրայ դիտողութիւն եթէ ունի յառաջ բերէ : Ես այնպէս չեմ հասկընար . Համագումար ժողովը նոյն յօդուածին զօրութեամբ պաշտօն ունի միայն կարծիք մը յայտնելու , և այս պարտքը կատարած է իւր բերած ցուցակովը : Իսկ նոյն յօդուածին զօրութեամբ Պատրիարքական ընտրելեաց ցանկերուն վրայ դիտողութիւն ընելու հրաւէրը բոլորովին աւելորդ է :

ԿՐՃԻԿԵԱՆ Յ . ԷՖ . — Խնդիրը Սահմանադրութեան այն յօդուածին վրայ է , որ կընէ թէ Համագումար ժողովն ընտրելեաց ցուցակ մը կը պատրաստէ դադրնի քուէարկութեամբ . այսինքն իւրաքանչիւր անդամ կը գրէ այն ամեն եպիսկոպոսաց անունները , զորս կրօնական մասին անընդունելի չհամարիր : Արդ կուզենք իմանալ թէ Համագումար ժողովն ի՞նչպէս կըմբռնէ այդ յօդուածը , ցանկէն դուրս մնացած եպիսկոպոսներն անընդունելի՞ կը համարի արդեօք :

ԻՓԵԿԵԱՆ Հ . ԷՖ . — Նախ՝ Համագումար ժողովոյ ընտրելեաց ցանկին առթիւ հարցումն ուղղող երեսփոխանաց կը ձայնակցիմ և անոնց հետ պատասխանի կապանեմ Համագումար Ս . Հարց կողմէն թէ արդեօք Հայոց եկեղեցին անընդունելի՞ կը ճանչնայ նոյն ցանկէն դուրս մնացած եպիսկոպոսները : Պարզ հարցում մ'է՛ այս , և պատասխանն ալ պէտք է պարզ ըլլայ : — Երկրորդ՝ Պատրիարքական ընտրութեան խնդրոյն գալով , որովհետեւ Գիււանը կը յայտարարէ թէ մեծամասնութեամբ որոշուած է այսօր քուէարկութիւն կատարել , որչափ ալ համամիտ չլինիմ այս որոշման , սակայն ինչպէս որ Գիււանը գիտե՛լ տուաւ :

Թէ փոքրագոյն մասը մեծագոյն մասին որոշման հնազանդիլ պարտաւոր է, այո՛, ըսելիք մը չունիմ այս մասին: Այսու ամենայնիւ Ժողովը սա ալ գիտնալու է որ իմ է տարուան երեսփոխանական պաշտօնավարութեանս միջոցին մէջ այնպիսի որոշումներ ալ ըրաւ և գործադրեց, որոց վրայ ի վերջէ զզջաց և զանոնք փոխեց, բայց երկար ժամանակի կորուստներէ և ժողովրդեան մէջ ալ այս առթիւ իւր վարկը նուազեցնելէ ետև: Այո՛, հնազանդիլ պարտք է, բայց չմոռնանք թէ գիտողութիւն ընելու ալ իրաւունք ունինք. այսօր քուէարկութիւն պիտի լինի, ևս չպիտի կրնամ մասնակցիլ այդ քուէարկութեան. իրրև երեսփոխան կը կարծեմ թէ պարտական եմ չմասնակցիլ. ինչո՞ւ. — պատճառը պիտի բացատրեմ: Վասն զի . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. (ընդմիջելով) — Խոնդրէն դուրս մի՛ ելնէք. հիմա քուէ ուզող չկայ ձեզմէն: Ձեր բացատրութիւնը քուէարկութեան ժամանակին պահեցէք:

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՅ. — Ընտրելեաց ցուցակին վրայ գիտողութիւնս ըրի, ըրած հարցումս պարզ էր, պէտք է որ պատասխանն ալ պարզ և մեկին ըլլայ: Իսկ քուէարկութեան մասին չպիտի կրնամ մասնակցիլ ըսի. Երեսփոխանական ժողովոյ պարտքն է, երբ քուէ չեմ տար կըսէ մէկը, պատճառը հարցնել և բացատրութիւն ուզել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այդ ձեր կարծիքն է, երբ քուէարկութեան ժամանակը դայ, ազատ էք քուէ տալու կամ չտալու:

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՅ. — Իմ կարծիքս չէ, Սահմանադրութեան կարծիքն է:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Եկեղեցական Համագումար ժողովն վերջնութեան նիստին մէջ ալ բացատրութիւն ուզուեցաւ ընտրելեաց ցուցակի մասին. բայց այլ ընդ այլոյ պատասխաններ տրուեցան. որ մէկն Ատուծոյ պատասխանատու ենք ըսաւ, որ մէկն ալ եկեղեցւոյ. ասոնց ամենն ալ անտեղի խօսքեր են. վասն զի Ազգէն ընտրուած մարմինները պատասխանատու են Ազգին. անպատասխանատու բան չկայ. միապետներն անգամ զէթ բարոյապէս պատասխանատու են ժողովրդեան:

Այս տեսութեամբ ներկայացեալ ցանկն իւր անխալ ըմբռնելով բացատրութիւն չենք կրնար ուզել ըսելն կը նշանակէ թէ օրին մէկն ալ թէ որ Համագումար ժողովն Չ հողւոյ ցանկ մը բերէ, միայն այն Չ ին վրայ ընտրութիւն պիտի ընենք, որ անտեղի է, հետևաբար Համագումար ժողովը պատասխանատու է իւր սահմանադրական գործողութեանց համար: Սահմանադրութիւնը կըսէ թէ « Համագումար ժողովն ընտրելեաց ցուցակ մը կը պատրաստէ գաղտնի քուէարկութեամբ. այսինքն իւրաքանչիւր անդամ թղթոյ մը վրայ « կը գրէ այն ամեն եպիսկոպոսաց անունները՝ « դուրս կրօնական մասին անընդունելի չհամարիր: Ետքը՝ քուէհամարն ըլլալով, այն անունները յատուկ ցուցակի մը մէջ կ'առնը. « ուրն քուէից շատութեան կարգաւ »: Այժմ Համագումար ժողովն այդ ցուցակն այս գործողութիւնները չըրած բերէր, այն ատեն իրաւունք ունէինք գիտողութիւն ընելու. բայց հիմա իրաւունք չունինք, ինչու որ գիտենք թէ պէտք եղած սահմանադրական գործողութիւններն ըրած է, Իսկ Սահմանադրութեան նոյն յօդուածը կը նշանակէ թէ Համագումար ժողովոյ իւրաքանչիւր անդամն իւր խղճին հարցնելով՝ պիտի գրէ այն եպիսկոպոսները, որոնք Հայոց Պատրիարքութեան պաշտօնին կրօնական հանգամանքը կը կրեն. (ընդմիջում) մի՛ ընդմիջէք. ասանկ է. և երբ իւր խղճովը կը դատէ թէ այս ինչ եպիսկոպոսն այդ հանգամանքը չունի, անոր անունը չգրեր, այս ըսել չէ թէ նոյն եպիսկոպոսը կրօնապէս յանցապարտ է:

Այս յօդուածին տաճկերէն թարգմանութիւնն ալ կարգամ, հայերենէն շատ տարբեր է և աւելի աղէկ կը բացատրէ. ահաւասիկ. « Վէ պու մէճլիս թարաֆընտան մէճլիսի ու « մուսիլի բուհանի տավթ օլընարագ, բէյի « խաֆի իլի պէր վէճհի աթի պիր գըթա է « սամի տէֆթէրի թէրթիս օլընուր: Մէճլիսի « մէկքիւր ազասընտան հէր պիրի բուհանիճէ « շայանը գապուլ ատտ իթտիկի պիսկոպոս « լարըն էսամիսինի պիր քեազրա իւզէրինէ « թահրիր իթտիքտէն սօնրա, թատատի բէյ « օլընարագ, էսամիլի մուհարրէրէ հէր պիրի « նէ խասպէթ իթմիլ օլան բէյլէրին քէսրէթի « նէ կէօրէ, սըրա իլէ պիր տէֆթէրի մախ-

« սուսէ տէրճ օլընուր »: Կրկուքին մէջ մեծ տարբերութիւն կայ. այսինքն՝ կրօնական մասն ընդունել է կը համարէ և անընդունել է չհամարէ խօսքերուն մէջ. մէկուն մէջ վճիւ կայ, միւսը դուրս մնացածներուն համար է. քուէն արժանաւոր ըլլալուն վկայութեան համար կը տրուի: Օրինակի համար, տեղ մը Թաղական խորհուրդ պիտի ընտրուի. ենթադրելով թէ հոն 450 ընտրելի կայ, և եթէ ասոնց մէջէն 8 հատը ընտրելեաց ցանկին մէջ առնուի, միթէ դուրս մնացածները ազգային պաշտօններու համար անընդունելի են կրնանք ըսել և կրնանք ամբաստանել. — ո՛չ, Համագումար ժողովոյ ընտրելեաց ցուցակէն դուրս մնացած եպիսկոպոսաց մէկն ալ կրօնապէս անընդունելի պիտի համարինք. — երբէք: Այս օրեմն Համագումար ժողովոյ հարցնելն անգամ թէ ի՞նչպէս կըմբռնէ Սահմանադրութեան նոյն յօդուածը, աւելորդ է: Երբ եկեղեցականները կը վարանին պատասխանել և ըսել թէ ցանկէն դուրս գանուողին համար վճիւ մը չկայ, զմեզ չիտիթութեան մէջ կը ձգեն. սակայն ըստ իս ասոր պատասխանը ոչ Համագումար ժողովոյ Ատանապետին կիցնայ տալ, որ Եգիպտեան Սրբազանն է եղեր, և ոչ Ատենադպրին, որ Իլմիրլեան Մատթէոս վարդապետն է եղեր. այլ Նախագահ Սրբազանին, որ է Տեղապահ Ներսէս Սրբազանը: Այժմ Նորին Սրբազանութիւնը նոյն յօդուածին ոգին ըմբռնած չըլլար, ցանկը հոս չպիտի բերէր և ասանկ ծանր խնդիր մը յարուցանելու տեղի տալ. ուստի Տեղապահ Սրբազանը կը պարտաւորի բացատրութիւն տալ:

S. ԳԷՈՐԳ ՔԱՀԱՆԱՅ ԱՐՄՐՈՒՆԻ. — Քանի որ կրօնականաց վիճակին նկատմամբ խօսք կըլլայ, ներեցէք որ վարդապետօրէն պատասխանեմ իմ մասին, թէ և այս առթիւ բուն խնդրէն քիչ մը հեռանալու ալ ըլլամ: Երբ Ա. Գիրքը կարդանք, կը տեսնենք որ հովուական պաշտօնութեան հրաւիրելոց դանազան հողիներ տրուած են, թէ և հողին մի է, բայց ինչպէս որ պաշտօնները զանազան են, ասանկ ալ մարդոց բնաւորութեան և ընդունակութեան համեմատ տրուած են ոմանց շնորհի տութեանց, ոմանց լեզուաց, այլոց շնորհ բը-

ժըլիութեան, և այլն: Այսպէս Եկեղեցական Համագումար ժողովն ալ երբ Պատրիարքական ընտրելեաց ցանկը կը պատրաստէր, այն եպիսկոպոսները միայն նշանակեց, որոց վրայ գտաւ ըստ իւր կարծեաց Պատրիարքութեան պաշտօնին յատուկ եղած ձիրքը. իսկ դուրս մնացածներն ինչո՞ւ մերժուած համարին, անոնք ալ եկեղեցւոյ հովիւներն են, որ եթէ Պատրիարքութեան պաշտօնին կրօնական յարմարութիւնը չունին, սակայն կարող են ուրիշ շատ պաշտօններու արժանի ըլլալ. ինչո՞ւ կիրք կը բանեցնէք և թիւր մեկնութիւններ կուտար: Կարծեմ կրօնական Հարց ամենն ալ այսպէս ըմբռնած են, և ոչ որ Համագումար ժողովոյ ցուցակէն դուրս մնացողներուն համար կրնայ ըսել թէ կրօնի և բարուց կողմանէ պակասաւոր են:

S. ՅԱՀԱՆԱՅ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՐԵԱՆ. — Այո՛, այո՛, այնպէս է:

ՄԱՋԼՄԵԱՆ Յ. ԷՅ. — Համագումար ժողովոյ ցանկին վրայ մեր ըրած գիտողութիւնը ընական բան մ'էր. որովհետև Սահմանադրութեան 2րդ յօդուածը կըսէ թէ « Ընդհանուր ժողովը կրնայ Քաղաքական ժողովոյ ներկայացուցած ցուցակէն դուրս անձի մը վրայ ալ քուէ տալ, սակայն պէտք է որ այն անձին անունը նշանակուած ըլլայ Եկեղեցական Համագումար ժողովոյ ներկայացուցած ցուցակին մէջ, վասն զի այս եկեղեցական ցուցակէն դուրս մնացած անձի վրայ ընտրութիւն չկրնար ըլլալ »: Շատ ծանր և փափուկ խնդիր մ'է այս. պէտք է համապարենք. վասն զի բազմաթիւ եպիսկոպոսներ դուրս մնացած են Համագումար ժողովոյ ցուցակէն: Իլմիրլեան Մատթէոս վարդապետ Համագումար ժողովոյ կողմէն պատասխանելու անկարող ըլլալը յայտնելով իբրև երեսփոխան պատասխանեց թէ Համագումար ժողովոյ պաշտօնը յիշեալ յօդուածին գորութեամբ մի միայն կարծիք մը տալ է և այս պարտքն արդէն կատարած է: Այս մեկնութիւնը սխալ է և չեմ կրնար ընդունիլ, քանի որ Սահմանադրութիւնը կարգիլէ մեզ ցանկէն դուրս քուէ տալու, մինչդեռ Մատթէոս վարդապետ կարծիք մ'է միայն կըսէ: Նոյնպէս Օգոսէն էֆի թաղական խորհրդոց նկատմամբ բերած օրինակն ալ սը-

խալ է . ըստ թէ Թաղական խորհրդոց ընտրութեանց ժամանակ ալ շատ մը Թաղեցիք ընտրելեաց ցանկէն դուրս կը մնան , և միթէ կը հետեւին՝ ասկէ որ անոնք անարժան և անպատիւ անձինք ըլլան : Այո՛ , Թաղային ընտրութեանց ցանկէն դուրս մնացողներուն արժանիքը կասկածի ներքև չկրնար ընկնիլ . վասն զի պատրաստուելիք ցանկերը միշտ ընտրելեաց եռապատիկ թուովը կը շինուին և սահմանափակ են . սակայն Պատրիարքական ընտրելեաց ցուցակը քանի որ սահման մը չունի , և ամեն արժանաւորները կարելի է անոր մէջ անցընել , միշտ դուրսը մնացողներուն արժանիքը կասկածի ներքև չի կած կը համարուի : Աստի ես սա՛ բացատրութիւնը կրնամ տալ թէ Համագումար ժողովոյ Ս . Հարք վերահասու չեն եղած Սահմանադրութեան յիշեալ յօդուածոյն զօրութեանը . այսինքն է գրել այն ամեն անունները՝ զորս կրօնական մասին անընդունելի չդատիր . եթէ լաւապէս վերահասու լինէին այս յօդուածին ողբոյն , խիստ մեծ ուշադրութեամբ պիտի շինած ըլլային ընտրելեաց ցուցակը . այնպէս որ հազիւ մէկ եպիսկոպոս դուրս մնացած պիտի ըլլար . սակայն յայտ է թէ անուշադրութիւն ըրած են : Գալով Օգոստն է՛ք . ի այն խօսքին թէ Համագումար ժողովոյ կողմէն ոչ Ատենապետին և ոչ Ատենադպրին կիցնայ պատասխան տալ , այլ Նախագահ Սրբազանին , այդ ալ չեմ կրնար ընդունիլ . ուրիշ բան է թէ Նախագահ Սրբազան կրնայ իւր կարծիքն ու համոզումը յայտնել այս մասին . ինչպէս ուրիշ եկեղեցական Հայրեր յայտնեցին . սակայն եթէ յանուն Համագումար ժողովոյ պատասխանէ , կրնայ ըսել Համագումար ժողովը թէ մեր կողմէն պատասխանելու պաշտօն չենք տուած . ուստի Համագումար ժողովն ինք պէտք է պատասխանել և բացատրել թէ ինչո՞ւ 45 եպիսկոպոսի ցանկ միայն կը ներկայացնէ և թէ ի՞նչպէս ըմբռնած է դուրսը մնացողաց արժանիքը , հերետիկոս են , ի՞նչ են : Ես կը կարծեմ թէ առանց այս կարևոր բացատրութիւնները նոյն խիկ Համագումար ժողովէն ստանալու , չպիտի կրնանք Պատրիարքի ընտրութեան ձեռնարկել :

ՊԵՆԱՆ Ք . ԷՅ . — Համագումար ժողովին հարցում կըլլայ , պէտք է պատասխան

տրուի . բայց քանի որ հոս իր ներկայացուցիչը չունի , հարկ կըլլայ գրով բանակցիլ . սակայն գրաւոր բանակցութեամբ գործը շատ ետ կը մնայ : Աստի իմ կարծիքս պէտք է ըսեմ այս մասին . հակասութիւնը նոյն խիկ Սահմանադրութեան այն յօդուածին մէջն է , որ կըսէ թէ Համագումար ժողովը դադանի քուէարկութեամբ պիտի պատրաստէ Պատրիարքական ընտրելեաց ցանկը . եթէ այս ցանկէն դուրս մնացողները դատապարտելի պիտի համարուին , ըսել է Համագումար ժողովն այս պարագային մէջ դատաւորական պաշտօն կը կատարէ . եթէ այսպէս է , դադանի քուէով չըլլար . անոր համար կրտսմ թէ հակասութիւնը Սահմանադրութեան մէջ է : Ահա փորձով ցուցընեմ այս հակասութիւնը . ընտրելեաց ցանկը 25 քուէէն կ'սկսի , մինչև մէկ քուէ՛կայ . այս 1 քուէն բաւական կըլլայ կոր եպիսկոպոս մը դատապարտութենէ ազատ ընելու , և նոյն 1 քուէն չը վատըկողը դատապարտելի համարելու . այս անհեթեթ է . մէկ քուէով դատապարտութիւն չըլլար : Եթէ դադանի քուէով պիտի շինուի ցանկը , այն ատեն մեծագոյն մասին քուէն պէտք է . և թէ որ այս ցուցակին մէջ չանցնողը դատապարտելի պիտի համարուի , վճիռ մը պէտք է որ նա ալ իր դատապարտութեան պատճառն իմանայ :

Արդ՝ մեր ընելիք ընտրութիւնն այս Սահմանադրութեան վրայ պիտի ըլլայ , բայց Սահմանադրութեան այս մէկ յօդուածը թերի է եղեր , ի՞նչ ընենք . քանի որ ներկայացեալ ցուցակին մէջ թերութիւն մը չկայ և գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան համաձայն պատրաստուած է , ետ չենք կրնար ձգել . Ես սա՛ կըսեմ թէ անոնք որ այս ցուցակը թերի կը նկատեն , կը սխալին . ընդհակառակն թերութիւնը նոյն խիկ Սահմանադրութեան մէջ է , ինչպէս բացատրեցի : Սակայն այս թերութեան դարման մը եթէ ընել հարկ է , այն ալ այսօրուան գործ չէ . ուրեմն մեք պէտք չէ որ այս պատճառաւ Պատրիարքական ընտրութիւնն այսօր ետ ձգենք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՅ . — Այս խնդիրն եկեղեցականաց և աշխարհականաց մէջ խտրութենէն ծագումն առած է , և ամեն անգամ որ Պատրիարք ընտրուի , պիտի նորոգի և յուզի : Պատրիարքը կընտրուի Երեսփոխանական

Ժողովէս : ուր 140 էն 20 եկեղեցական կայ միայն , որ Երեսփոխան են , և կը մասնակցին ընտրութեան . և ըստ որում ընտրեալ Պատրիարքը միանգամայն Հոգևոր գէտ և տեսուչ է Թուրքիարնակ ազգայնոց , արժան գատուեր է Եկեղեցական Համագումար ժողովոյ կարծիքն ալ կանխաւ առնուլ ընտրելեաց Պատրիարքական արժանեաց վրայ . հետևարար Սահմանադրութեան խմբագիրներն այս խընդրոյն պարագաները նկատելով ուղեր են որ Համագումար ժողովը ցանկ մը տայ և Ընդհանուր ժողովն այն ցանկէն դուրս չենէ : Պահ մը առաջ Օգոստն է՛ք . ըստ թէ Համագումար ժողովն 2 հոգևոյ ցանկ գայնէ ի՞նչ ընենք : Համագումար ժողովը կրնայ ուրեմն 1 հոգի ալ ընտրել , այն ատեն Պատրիարքն ինք ընտրած կըլլայ . բայց ասանկ չէ . այդ կէտը հակադրուած է Սահմանադրութեան մէջ . Համագումար ժողովը գոնէ 6 ընտրելի պիտի ցուցընէ , որպէս զի Քաղաքական ժողովը կարենայ 5 հոգի գտակ ըստ Սահմանադրութեան : Եւ որովհետև Համագումար ժողովն ուղէ նէ կրնայ Ընդհանուր ժողովին ուղածներէն և ոչ մի եպիսկոպոս դնել . այս ալ հակադրուած է Սահմանադրութեան մէջ , որ կը արանադրէ չէ թէ Համագումար ժողովոյ մեծագոյն մասին ընտրելին ներկայացնել Ընդհանուր ժողովոյ , այլ քուէից կարգաւ բոլոր ընտրելիք պիտի նշանակուին Համագումար ժողովոյ ցուցակին մէջ . որով 1 քուէ առնուլ եպիսկոպոսն ալ կրնայ Ընդհանուր ժողովոյ ընտրելին ըլլալ : Իսկ եթէ այս անգամ կը գտնուին այնպիսի եպիսկոպոսներ , որ այդ ցուցակէն դուրս մնացած են , անոնք Պատրիարքական արժանիքէ դուրկ համարուած են ըստ Համագումար ժողովոյ . վասն զի եթէ ՚ի կրօնս կասկածելի պիտի համարինք , ի՞նչ պիտի ըսենք Քաղաքական ժողովոյ պատրաստած 5 ընտրելեաց ցանկէն դուրս մնացողաց համար . միթէ անոնք ալ քաղաքականացէս Գրան առջև կասկածելի՞ պիտի համարինք . ասանկ բան չըլլար : Յուշուած խնդիրը բաւական խնդիր մ'է , որ թիւրիմացութիւն կուտայ , և այս մասին եթէ անօրէնութիւն մը պէտք ըլլայ ընել , Պիկեան է՛ք . ի ըսածին պէս այսօր չը կրնար ըլլալ , վերաքննութեան մէջ կրնանք նայիլ ասոնք : Համագումար ժողովոյ կարծիքը

գրով ուղերու ալ հարկ չկայ . այն ատեն թուրքականութիւն մը պէտք է որ բացուի երկու ժողովոյ մէջ , և ո՛ր գիտէ թերևս Պատրիարքի ընտրութիւնն ամիսներ յետաձգի , որ աղէկ հետեանք չունենար : Արդէն ՏՏԲ Քէօրդ հայրն ըստ թէ դուրս մնացողներն ոչ թէ ՚ի կրօնս և ՚ի բարս պակասաւոր են , այլ Պատրիարքական պաշտօնին անյարմար համարուելուն համար դուրս ձգուած են : Ըստ իս այսքան բացատրութիւն ալ բաւական է և հարկ չկայ այսօր Պատրիարքի ընտրութիւնն ետ ձգել :

Տ . ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴ . ԻՍԿԵՆՏԵՐԵՕՆ . — Փախաղեան է՛ք . ի տուած բացատրութեանց կէտերուն ես ինքս ալ համաձայնելով , անոնց վրայ սա ալ կաւելցնեմ ՚ի պատասխան այն տարիութեան , որով կը հետեւցնեն թէ Համագումար ժողովոյ ցանկէն դուրս մնացածները պակասաւոր կամ դատապարտելի են . եթէ ասանկ ենթադրութիւն ըլլար , ուրիշ գործողութիւններ ալ կան . Սահմանադրութեան 2 դր յօդուածը կըսէ թէ նախ և առաջ Տեղապահը Տածկաստանի մէջ գտնուած բոլոր եպիսկոպոսաց ցանկը կը շինէ հանգամանքին նշանակելով և Կրօնական ժողովոյ կը ներկայացնէ . այս ժողովն ալ Համագումար ժողովը կը հրաւիրէ , որ ընտրելեաց ցանկ մը պատրաստէ . այս անգամ Համագումար ժողովին մատուցուած ընդհանուր ցուցակը 23 եպիսկոպոս կը պարունակէր . թէ որ Համագումար ժողովը պարտաւոր ըլլար ամենն ալ իր ցուցակին մէջ անցընելու , ի՞նչ հարկ կը մնար իւր կողմէն ընտրելեաց ցուցակ չինելու . նոյն ընդհանուր ցուցակը բաւական էր : Համագումար ժողովն ինք պատասխանատու չէ ընտրելեաց ցանկին համար . զի Սահմանադրութիւնը կըսէ թէ իւրաքանչիւր անգամ կը գրէ թղթի մը վրայ այն անունները , զորս անընդունելի համարիր . Սահմանադրութեան այս կէտը պարզ է և շատ լաւ տրամադրուած . քանի որ չկայ այնպիսի պայման մը բոլոր եպիսկոպոսներն ալ նշանակելու . և իւրաքանչիւրին խղճին թողած է դադանի քուէով ընտրել , դուրս մնալը դատապարտութիւն չէ , այլ իւրաքանչիւրն իւր խղճին առջև մասա իւրիք անընդունելի համարած է . ուստի խոհեմութիւն չէ հետեւցնել թէ ըստ կրօնի թերութիւն կամ արտա մը կրնան սեննուլ : Այս անգամ Համագումար ժողովին ցանկէն

դուրս ձգուածներն 7 հատ են . լաւ կը յիշեմ որ Խրիմեան սրբազանի ընտրութեան ժամանակ ալ այսչափ մը դուրս մնացած կային . բայց այն ատեն ասանկ գիտողութիւն մը չեղաւ , քանզի գիտողութեան հարկ չկար , եւ ըստ իս հիմա ալ հարկ չկայ : Ահա այսչափ է իմ բացատրութիւնս :

Տ. ՅՈՒՆԱՆՆԻՍ ՔԷՆՅԵ . ՄԵՐԵԱՆ . — Երբ անդամ Համագումար ժողովոյ պիտի բացատրեմ իմ համոզումս այս ընտրելիաց ցանկի պատրաստութեանը մէջ . բայց ըստ որում իմ ըսելիքներս արդէն պաշտօնակիրներս խօսեցան , վասն որոյ խիստ համառօտելով կըսեմ թէ ես քուէ տուի այն ցուցակին վրայ որ կրօնական ժողովէն մեզի եկաւ . իմ խիղճս դորանք որ յարմար դատեց Պատրիարքական բարձր պաշտօնին , նշանակեցի իմ քուէթղթիս մէջ . անկէ դուրս մնացողներուն համար հարցընել թէ զատապարտելի են կամ ՚նչ են , ասոր վրայ ես այդ օրինակ կարծիք չունիմ : Ընդհանուր ժողովը կրնայ Սահմանադրութեան այդ մասը այսուհետեւ քննութեան անուի եւ բացատրելն դրել ու զնել Սահմանադրութեան մէջ , որպէս զի կրկին խօսքի նիւթ չըլլայ : Ուրիշ գիտողութիւն մ'ալ ունիմ . ես չեմ տեսներ Սահմանադրութեան մէջ տեղ մը , որ իբրեւ զայ գիւանին գիտողութիւն ուղիւ երեսօխոսաններէն Համագումար ժողովոյ ներկայացուցած ցանկին վրայ , պատճառ բանելով Սահմանադրութեան 2րդ յօդուածին այն պարբերութիւնը , որ կըսէ թէ « Քաղաքական ժողովոյ ցուցակէն դուրս անձի վրայ կրնայ ընտրութիւն ըլլալ , բայց նոյն անձին անունը Համագումար ժողովոյ ցուցակին մէջ պէտք է նշանակուած ըլլայ , վասն զի այն ցուցակէն դուրս ընտրութիւն չըլլար » : Այս պարբերութեան պատկերակարգը գիտողութիւն ուղիւ կարծեմ սխալ մըն է , որ ընդհանուր ժողովոյ գիւանը ըրաւ եւ այսքան խօսքերու պատճառ տուաւ :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՑ . — Տեսքը իմ , աշխարհիս մէջ երկիր մը չկայ ուր օրէնքները գործադրութեան միջոցին երկու կողմէն չհաստատանուին : Երեսօխոսաններէն ոմանք՝ որոց ես ալ ձայնակից էի , հարցում մը ուղղեցին թէ Համագումար ժողովոյ Ս. Հարք ՚նչ կերպով կը մտնեն Սահմանադրութեան 2րդ յօդ-

ուածին այն պարբերութիւնը՝ որ Համագումար ժողովոյ ընտրելիաց ցուցակին պատրաստութեանը կը վերաբերի : Երբ նոյն յօդուածը մէկէն 'ի մէկ կարդացինք , այնպէս մը ըմբռնեցինք թէ ուրեմն դուրս մնացածներն անընդունելի պիտի համարէ : Բայց կը յիշեցնեմ ձեզ թէ երկու նիստ առաջ երբ երեսօխոսաններէն ոմանք ընտրելիաց ցանկին վրայ միեւնոյն գիտողութիւնները յարուցին , Համագումար ժողովոյ անդամներէն ոմանք թէ եւ ոչ յանուն նոյն ժողովոյն , այլ իրենց կողմէն այնպիսի բացատրութիւն մը տուին , զոր ես լսելուս պէս համոզուեցայ : Ամեն Սահմանադրութեան մէջ բառական գործադրութիւն չկրնար ըլլալ առանց միտքը հասկնալու . երբ ո՞ր եւ իցէ յօդուածի մը տառական իմաստէն թիւր կամ չիտի մեկնութիւն մը կը յառաջանայ , պէտք է անմիջապէս օրէնսդրին քուն գիտաւորութիւնը փնտրել զտեսլելու ըստ այնմ մեկնել , որ ըսել է Սահմանադրութեան օրէն է որ կը գործադրուի , եւ ոչ թէ տառը , Բարեբաղդաբար սեր Սահմանադրութեան մէջ ասանկ պարտադանը պատահած ատեն մեծ գիւրութիւն մը ունինք օրէնքին միտքը հասկնալու համար , այն է տաճկերէն խմբագրութեան հետ բաղդատութիւնը : Գիտէք , Տեսքը իմ , թէ մեր Սահմանադրութիւնն որքան որ 'ի սկզբան հայերէն խմբագրուած եւ յետոյ տաճկերէնի թարգմանուելով Բ. Գրան ներկայացած է , այսու ամենայնիւ կայսերական հրամանաւ հաստատուելով Պատրիարքարան եկած միջոցին , հայերէն բնագիրը կորսուած ըլլալուն պատճառաւ , նորէն տաճկերէնէ 'ի հայերէն թարգմանուած է : Բաղդատներ ուրեմն տաճկերէնին հետ որ կըսէ , « Քաղաքէ շայտան ատտ իթ » « տիկի փիսկոսպարբն էսամիսի թարիր իթ » « տիքտէն սօնկրա » եւ այլն : Եթէ հայերէն խմբագրութեան տառին համաձայն ըլլար օրէնքին միտքը , անշուշտ « գապուլէ շայտան օլմայանլար » ըսելով խմբագրուած պիտի ըլլար նոյն յօդուածը :

Սրդ՝ քանի որ Համագումար ժողովոյ տուած մեկնութիւնը Սահմանադրութեան օրէնց համաձայն է , եւ անոր Պատուարման անգամոց ամենն ալ միահամուռ կը յայտարարեն թէ ընտրելիաց ցանկէն դուրս մնացող եպիսկոպոսները կրօնական մասին անընդունելի չեն համարուիր , այլ կրօնական մասին ամենէն ըն-

տիր յատկութիւններն ունենալով հանդերձ , միմիայն Պատրիարքութեան յարմար չեն դատուած , քննադատութիւնը մէկի զնելով աւելի բացատրութիւններ պահանջելու չենենք : Վասն զի մենք չենք կրնար քննադատել այն յօդուածը , որ Համագումար ժողովին վրայ հարկ չէ դրեր ամեն եպիսկոպոսաց քուէ տալու եւ իւր ցուցակին մէջ անցնելու . չենք կրնար ալ ազաւաղել եւ ըսել թէ ինչո՞ւ մէկ քանի եպիսկոպոսներ դուրս ձգած է իւր ցուցակէն :

Նկատելով ուրեմն որ Պատրիարքական ընտրութեան ստիպողականութիւն սալու համար երեսօխոսանաց շատերն իրենց համոզումը զօնեցին Վարչութեան առաջարկութեանը , եւ մեծամասնութիւնն ալ անոր անմիջապէս գործադրուելն որոշեց , եւ ընտրելիաց ցանկին Սահմանադրութեան օրէնց համաձայն յօրինուած ըլլալը բացատրուեցաւ , ըստ իմ փնտրանութիւնը պէտք է դադարեցնել եւ ընտրելիաց ցանկին օրինաւոր ըլլալը ժողովոյն որոշմամբը հաստատելէ ետեւ , անյապաղ ընտրութիւնը կատարել եւ մեր խղճմտանաց համեմատ քուէնիս տալ :

ՆԱԽԱԳԱՆ ՍՐԲԱՋԱՆ . — Սահմանադրութիւնը Համագումար ժողովին համար անկ մի պիտի չինէ ըսած է . սակայն ժողովը հաստատանաւ չէ ըրած , այլ իւրաքանչիւր անգամ տղատ ձգած է իւր քուէովն ընտրել Պատրիարքութեան պաշտօնին արժանի դատածները . ինձ կը թուի թէ Սահմանադրութեան խոսքիները սխալած են նոյն յօդուածին մէջ ըրուած մասին անընդունելի բառերը գործածելով . աւելի վայելուչ կըլլար ըսել Պատրիարքութեան պաշտօնին արժանի ընտրել : Կարծեմ թէ Համագումար ժողովոյ այս անգամի շինած ցանկն եթէ սխալ մ'ունեցած է , այն ալ իմ անունս նոյն ցանկին մէջ դրուելն է , ասկէջ Կտարի առաջ չկար իմ անունս ընտրելիաց ցանկին մէջ , շատ աղէկ ըրած կըլլային եթէ այս անգամ ալ չընէին :

Այս պահուս Տ. Խորէն սրբազան խօսք ուղած էր գիւանէն , երբ վիճարանութիւնը բաւ համարելու եւ Պատրիարքական ընտրութեան քուէարկութեանը ձեռնարկուելու խընդիրներ կը յատենն երեսօխոսանաց ոմանց կողմէն :

Ասեմապետ էՖ. յայտարարելով թէ տալուին 6 ատենաբան կան՝ որ ընտրելիաց ցանկերուն համար խօսք ուղած են գիւանէն , այսու ամենայնիւ եղած վիճարանութիւնները բաւական համարել ուղղաներ ըլլալուն համար , քուէով ժողովին կամքը հարցաւ , եւ հակառակ ինչիցձեան էՖ. ի գիտողութեան , որ տակաւին լուսարանութեան կարօտ կը ցօցընէր խնդիրը , ընդհանուր հաւանութեամբ վիճարանութեան գոցուելն որոշուեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . — Գիւանն ալ բաւական կը համարի եղած վիճարանութիւնը Պատրիարքական ընտրելիաց ցանկերուն վրայ , եւ այս վիճարանութիւնը խիստ կարեւոր էր , վասն զի կան անանկ երեսօխոսաններ , որ այս ցուցակաց մէջ տեսնելով թէ իրենց սիրելին չկայ , բնականաբար հետաքրքիր կըլլան բացատրութիւն ուղիւ . թէ եւ ոմանք այսպէս եւ ոմանք այնպէս մեկնեցին , հոգ չէ . բայց ապագային համար կրնան այս մեկնութիւնները լուսարանութիւն ըլլալ եւ լաւ կերպով բացատրուիլ օրինաց մէջ , որպէս զի այլ եւ այլ մեկնութեանց նիւթ չըլլայ : Երեսօխոսան էՖ . ըսաւ ինչպէս եւ Սրբազան Նախագահը եւ ուրիշ եկեղեցական Հարք բացատրեցին , այսուհետեւ վերջացած պէտք է համարուին այն գիտողութիւնը՝ որ երեսօխոսանաց ոմանց կողմէ եղան իրենց սիրելիաց անունները Պատրիարքական ընտրելիաց ցանկերուն մէջ չդրանելուն համար : Ուրեմն այս ցանկերը բաւական համարելով , Պատրիարքական ընտրութեան քուէարկութեանը պիտի սխիւք . Քաղաքական ժողովը 5 ընտրելի ցուցած է ըստ քաղաքականին ամենէն յարմարաւոր . երեսօխոսանաց կը մնայ այս 5 ընտրելին իրենց ուշադրութեանն առարկայ ընել , կրնայ այս 5 էն դուրս ալ մէկն ընտրել , բայց անոր անունը պէտք է նշանակուած ըլլայ Համագումար ժողովոյ ցանկին մէջ :

Հետեւապէս նոյն ցանկին Սահմանադրութեան տրամադրութեանը համաձայն յօրինուած ըլլալը քուէի դրուելով , ժողովոյ կողմանէ կը հաստատուի :

Պատրիարքական ընտրութեան քուէարկութեանը համար մէկ քառորդ գաղար տրուելով , քուէհամարի համար քննիչ ընտրուեցան գիւանին կողմէն :

Խորէն վարդապետ Փոխանորդ Երուսաղեմի
 Հմայեակ » Այազմալեան
 Տէր Գէորգ քահանայ Արծրունի
 Տէր Խորէն » Փէհլիվանեան
 Յակոբ էֆէնտի Կոստանեան
 Յովհաննէս » Կրճիկեան
 Նշան » Քաղաղեան
 Յարութիւն » Մարդարեան

Քուէարկութիւնը կատարուեցաւ յանուանէ
 ընթերցմամբ երեսօխոխանները հրաւիրուելով :
 Յէ երեսօխոխան քուէարկութեան մաս-
 նակցեցան :

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Ես քուէ չեմ
 տար, եւ կը պահանջեմ որ իմ նախորդ դիտո-
 ղութիւններս ամբողջապէս արձանագրուին :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ես քուէ չպիտի տամ
 բոլի արդէն, եւ ուղեցի պատճառը բացատրել .
 գիւանը խոստացած էր քուէարկութեան ժա-
 մանակ խօսք տալ ինձ . ահաւասիկ բացատրու-
 թիւնս կուտամ : — Նախորդ Աղգային Ղեկա-
 նուր ժողովն օրինաւորապէս Պատրիարքի ընտ-
 բութիւնը կատարած էր . օրինաւորապէս ընտ-
 բուած Պատրիարքը յետոյ այս Ղեկանուր ժո-
 ղովին հրաժարական տուաւ, բայց խոզովը
 չընդունեց, եւ իր առաջարկութիւնը խնդրոց
 կարգ ընելով գինքը վերանաստատեց : Անկէ ե-
 տեւ անանկ զէպքեր տեղի ունեցան, որ ամն-
 նուս ծանօթ են, եւ վերստին հրաժարել ստի-
 պեցին գինքը . բայց այս վերջին հրաժարականը
 ժողովին չներկայացաւ օրինաւորապէս : Հիմա
 ինձմէ քուէ կուզուի Պատրիարքի ընտրութեան
 համար . եթէ քուէ տամ, ինչպէս պիտի հա-
 մոզուիմ թէ անոր պատիւը պիտի պահուի :
 Ուստի քանի որ Երեսօխոխանական ժողովը պար-
 տազանց դանուեցաւ, այս պարտազանցութեան
 չեմ կրնար մասնակցիլ եւ ազգին ինձ տուած
 քուէն օտնակոխ ընել :

ՀՈՎՈՒԵԱՆ Ղ. ԷՖ. — Ես ալ քուէ չու-
 նիմ :

Քուէհամարը կատարուելով հետեւեալ ար-
 դիւնքն ունեցաւ .

Տեղապահ Ներսէս Արքազան	քուէ	60
Կարնոյ Յարութիւն	»	4
Ազրիանուպօլսոյ Գրիգոր	»	4
Նար—Պէյ Խորէն	»	2

Հետեւապէս Ամեն . Տ . Ներսէս Արքա-
 զան ընտրուեցաւ Պատրիարք Կ . Պօլսոյ :

Ընտրութեան հանրագիրը, որ պատրաս-
 տուած էր արդէն, յատենի ժողովոյն կարգաց-
 ուելէն ետեւ, ստորագրուեցաւ ներկայ գըտ-
 նուող երեսօխոխաններէ : Եւ Վարչութեան Ա-
 տենապետին յանձնուեցաւ Բ . Դրան մատուց-
 ուելու համար :

Վիւանն ըստ որոշման ժողովոյն գնաց ե-
 կեղեցւոյն խորհրդարանն՝ ուր կը գտնուէր նոյն
 միջոցին Նորնաթ Ներսէս Արքազանը, պաշ-
 տօնապէս ծանուցանել իւր ընտրութիւնը եւ
 շնորհաւորել Վի գիմաց ժողովոյն :

Մէկ պահէն ետեւ Ատենապետ էֆ . վե-
 րադանալով յայտնեց թէ Նորին Արքազնու-
 թիւնը բաւական դժկամակութենէ ետեւ վեր-
 ջապէս ընդունել է Աղգին համակամ ընտրու-
 թիւնը : Այն յայտարարութեան հետ ժողովին
 հաղորդեց նաեւ Նորին Արքազնութեան կողմէ
 տրուած հետեւեալ կարեւոր տեղեկութիւն-
 ները .


« Քչիքթաչի ազգային գերեզմանատան
 տեսքը իզանակաւոր գիրքի մը վերածելու հա-
 մար Օթոստախաւ կայսեր յայտնած բաղձանքը
 գոհացրցիչ կերպով կատարուած եւ այս խըն-
 դիրը ստանց որ եւ է կերպիւ ազգին իրաւանց
 եւ զպայմանքը զպշեղու կարգադրուած է Վար-
 չութեան կողմէն :

« Նոյնպէս այս պարագային մէջ պէտք
 եղած եւ միանգամայն Պատրիարքական ընտ-
 բութեան եւ հաստատութեան առթիւ ըլլալիք
 ծխքերը հողացուելու համար Վսեմաչուք
 Արահամ պէյ Երածեան 4500 Օսմանեան լիրա
 քորհած է ազգային սնտուկին : Այս նուէրին
 համար Վարչութեան Խառն ժողովը փութացել
 է շնորհակալութեան նամակ գրել առ Նորին
 Վսեմութիւնն :

Ղեկանուր ժողովն զօնունակութեամբ
 լսեց եւ որոշեց արձանագրել սոյն տեղեկու-
 թիւնները :

Ատեանը գոցուեցաւ ժամ 10 1/2 ին :

Ապեւադպիւր Արեւապետ
 ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՅԵԱՆ ՍՏՐՅԵՍ ԱՂԱԲԷԿԵԱՆ





Գլխ 2 զուրուշ

ՍԵՓԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿՆԵՐ

Կը ծախուի 'ի Դիւ.անատան Պատրիարքարանի, և կը դ անուի
ամեն գրաւաճառաց քով և Նկեղեցեաց բանկայնեք :